# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

# ՀՐԱՄԱՆ

Թիվ 48-Լ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 29-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4.3-րդ մասի և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետով.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի «Նյութական վնասով ճանապարհատրանսպորտային պատահարի մասին արձանագրության ձևը և դրանում պարունակվող տեղեկատվությունը, ինչպես նաև պատահարի հանգամանքների տեխնիկական ելակետային տվյալների կազմի ու կառուցվածքի նկատմամբ պահանջները հաստատելու մասին» թիվ 29-Լ հրամանի 2-րդ կետում «հունվարի 20-ը» բառերից հետո լրացնել «, իսկ Պարեկային ծառայության պետ, ոստիկանության գնդապետ Ա. Ումրշատյանին՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 1-ը» բառերը:
2. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության իրավասու ծառայողներին և աշխատակիցներին:

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ**
**ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ** **Վ. ՂԱԶԱՐՅԱՆ**

«22» 10 2021թ.

ք.Երևան